ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.06.2018
Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 21 անդամներից 18-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:
2. 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում:
3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ Վ. Ավագյանի հաշվետվությունը:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի դեկան Վ. Ավագյանը: Նա ներկայացրեց, որ ‹‹Հայոց պատմության և հասարակագիտության›› ամբիոնը ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություն է իրականացվել «Պատմություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Առկա ուսուցմամբ ավարտական աշխատանք պաշտպանել է 19 ուսանող: Ուսանողներից 13-ը ստացել է «գերազանց», 6-ը՝ «լավ» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել: Հեռակա ուսուցման բաժնում 12 ուսանող պաշտպանել է ավարտական աշխատանք: 3 ուսանող ստացել է «գերազանց», 4-ը՝ «լավ», 5-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Զեկուցողը ավելացրեց, որ քննական հաձնաժողովի նախագահ պ.գ.թ., դոցենտ Ավետիս Հարությունյանը հիմնականում գոհ է մնացել ավարտական աշխատանքների գիտական մակարդակից, ուսանողների պատրաստվածությունից

ու ցուցաբերած գիտելիքներից, միաժամանակ առաջարկել, որ ավելի մեծ ուշադրություն դարձվի հեռակա ուսուցման բաժնի ուսանողների գիտակրթական մակարդակի բարձրացմանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի կողմից ուսումնական տարեսկզբին արդեն վերջնական հաստատվել էին ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները, նշանակվել էին ղեկավարներ: Սահմանվել էր գրաֆիկ ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար: Զեկուցողը նշեց, որ ամեն ինչ իրականացվել է ըստ գրաֆիկի, կազմակերպվել է նախապաշտպանություն, որը սովորաբար էական նշանակություն է առնում ուսանողների պաշտպանությունը պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Վկան հենց բուն պաշտպանությունը:

Զեկուցողը նաև նշեց, որ քննական հաձնաժողովի նախագահ բ.գ.դ. Վ. Դևրիկյանը իր գոհունակությունն է հայտնել քննական գործընթացի արդյունքների վերաբերյալ՝ մասնավորապես ընդգծելով այն հանգամանքը, որ շրջանավարտների գիտելիքները խորն էին, որակական մակարդակը՝ բարձր: Լավ տպավորություն է թողել ուսանողների բանավոր խոսքը, որ սահուն էր և տպավորիչ: Իհարկե, ավարտական որոշ աշխատանքներում նկատելի էին գրքայնություն, ինքնուրույնության պակաս և այլ որակի առանձնակի թերություններ: Հանձնաժողովի նախագահը խորհուրդ է տվել հետագայում խուսափել ծավալուն և տարողունակ թեմաներից և ավելի մեծ ուշադրություն դարձնել արդիական թեմաներին:

Զեկուցողը ներկայացրեց, որ առկա ուսուցման համակարգում ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 6 շրջանավարտներից 4-ը ստացել է «գերազանց», 2-ը՝ «լավ»: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Զեկուցողը նաև ներկայացրեց հեռակա ուսուցման բաժնի այս տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 16 շրջանավարտներից 2-ը ստացել է «գերազանց», 10-ը՝ «լավ», 4-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

«Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի կողմից մինչև ուսումնական տարվա սկիզբը կազմվել և հաստատվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: Սահմանվել է գրաֆիկ ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար: Սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ. իրականացվել է ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Զեկուցողը նշեց, որ ամբիոնը իր գործունեության ընթացքում առաջին անգամ ավարտական աշխատանքների պաշտպանություն է կազմակերպել նաև հեռակա ուսուցմամբ շրջանավարտների համար, որի արդյունքները ևս գոհացրել են:

Զեկուցողը նաև նշեց, որ ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, որը ընդգծել է նաև քննական հանձնաժողովի նախագահ Լիլիթ Բաղալյանը, ով իր գոհունակությունն է հայտնել ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Նա նշեց, որ աշխատանքները գրվել են անգլերենով, մեծ մասում ներկայացված էին լեզվաբանական ուսումնասիրությունների արդի խնդիրներ և փորձ էր արված նորովի և տարբեր տեսանկյուններից ներկայացնել դրանք:

Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած առկա ուսուցման համակարգի 17 ուսանողից 6-ը ստացել է «գերազանց» գնահատական, 11-ը՝ «լավ»: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Զեկուցողը նաև ներկայացրեց նույն մասնագիտության հեռակա ուսուցման բաժնի այս տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 7 շրջանավարտներից 1-ը ստացել է «գերազանց», 6-ը՝ «լավ»: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

«Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնի կողմից կազմակերպված ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է պատշաճ մակարդակով, քննական կարգի խախտման որևէ դեպք չի արձանագրվել: Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած առկա ուսուցման

համակարգի 10 շրջանավարտներից 5-ը ստացել է «գերազանց», 5-ը՝ «լավ» գնահատական: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Զեկուցողը նաև ներկայացրեց նույն մասնագիտության հեռակա ուսուցման բաժնի այս տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 26 շրջանավարտներից 12-ը ստացել է «լավ», 14-ը՝ «բավարար» գնահատական: «Գերազանց» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Զեկուցողը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո քննական հանձնաժողովի նախագահ, մ.գ.դ., պրոֆեսոր Հ. Պետրոսյանը ներկայացրել է իր առաջարկությունները՝ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ, և հայտնել իր գոհունակությունը տարվող աշխատանքներից: Նա առաջարկել է հետագայում ավելի մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքի հետազոտության մեթոդների ընտրությանը և դրանց համապատասխանությանը հետազոտվող առարկային:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» ամբիոնի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ, իրականացվել է ավարտական աշխատանքի նախապաշտպանություն:

Զեկուցողը նաև նշեց, որ ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, որը փաստեց նաև քննական հանձնաժողովի նախագահ բ.գ.թ. Մ. Ղազարյանը, ով իր գոհունակությունն է հայտնել ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Նա նշեց, որ ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքներով 4 ուսանող ստացել է «գերազանց», 10-ը՝ «լավ»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, մ.գ.թ., Հ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

Ֆակուլտետի դեկան Վ. Ավագյանը արձանագրեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունը բոլոր մասնագիտություններից ունեցել է պատշաճ ակադեմիական մակարդակ և բավարար կազմակերպվածություն:

Ուսանողները ավարտական աշխատանքների պաշտպանությանը ներկայացել են պատրաստ: Մեծամասնությունը անհրաժեշտ չափով ուսումնասիրել էր պահանջվող գրականությունը և օժանդակ նյութերը: Կային նաև թերի պատրաստված ուսանողներ: Վերջիններս հիմնականում եղել են ուսումնառության ընթացքում ակադեմիական ցածր առաջադիմություն գրանցած սովորողներ: Դեկանը շեշտեց, որ առաջընթացը պայմանավորված է մի շարք կարևոր աշխատանքներով, որոնք տարիների ընթացքում կանոնավորապես իրականացվում են ամբիոններում: Առաջին հերթին դրական դեր են ունեցել նախորդ ամիսներին կազմակերպված նախապաշտպանությունները: Ամբիոնների վարիչները գործող ժամանակացույցով իրականացրել են նախապաշտպանություններ /որոշ ամբիոններում մի քանի անգամ/, որոնց ընթացքում շտկվել են նկատված սխալներն ու թերությունները: Որակի բարձրացմանը անշուշտ նպաստել են նաև ավարտական և կուրսային աշխատանքներ կատարելու վերաբերյալ մեթոդական ձեռնարկների առկայությունը ամբիոններում, ինչպես նաև գնահատման հստակ չափանիշերով առաջնորդվելը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018թ. ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքը: Նշվեց, որ գարնանային քննաշրջանի ընթացքը եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է դեկանատի մշտական ուշադրության կենտրոնում: Ընդգծվեց, որ տարեցտարի բարձրանում է ուսանողների պատրաստվածության մակարդակը ստուգարքներին և քննություններին: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետի առաջադիմությունը

կազմել է 91.37%: Դա բացատրվում է նրանով, որ, տվյալ առարկայի նյութը մաս-մաս յուրացնելով, կիսամյակի ընթացքում պարբերաբար միջանկյալ քննություններ հանձնելով, ուսանողը եզրափակիչ քննությանը ներկայանում է պատշաճ գիտելիքներով: 2017-2018 ուստարվա ձմեռային քննաշրջանին մասնակցել է 313 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ են ստացել 31 ուսանող, գերազանց և լավ՝ 82, խառը գնահատականներ՝ 170, իսկ միայն բավարար՝ 3 ուսանող: 27 ուսանողներ չեն կարողացել հանձնել քննությունները և իրենց ուժերը կփորձեն լուծարքային շրջանում: Զեկուցողը նշեց, որ մեկ անբավարար է ստացել 17 ուսանող, երկու անբավարար՝ 8, իսկ երեք և ավելի՝ 2 ուսանող: Դրանց մի զգալի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Մի մասը անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Զեկուցողը ընդհանուր գծերով ներկայացրեց ակադեմիական պարտքերի պատկերը, որը, ըստ մասնագիտությունների, հետևյալն է.

- Պատմություն՝ 10
- Անգլերեն լեզու և գրակ.՝ 2
- Օտար լեզու և գրակ.՝ 2
- Տարրական մանկ. և մեթոդիկա՝ 13

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, մ.գ.դ., Վ. Բրուտյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Նա ներկայացրեց 2018-2019 ուստարվա ընթացքում Հումանիտար գիտությունների ֆակուլտետում իրականացված աշխատանքները (Հաշվետվությունը կցվում է՝ **Հավելված 1**):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Վ. Աղաբաբյանը, մ.գ.թ., Հ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակում դեկանի իրականացրած աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգում ընդգրկված էր նաև ընթացիկ մեկ հարց՝

ա) Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2017-2018թթ. անհատական ծանրաբեռնվածությունների քննարկման հարցը:

Ընթացիկ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ավագյանը: Զեկուցողը հայտնեց, որ ֆակուլտետի հինգ ամբիոններում գրեթե ավարտվել են դասախոսների՝ 2018-2019թթ. ուսումնական տարվա անհատական բեռնվածությունների կազմումը: Մինչ առարկաների բաշխումը բոլոր ամբիոններում տեղի են ունեցել քննարկումներ: Անհատական բեռնվածության հիմքում դրվել է գիտական աշխատանքների ուղղվածությունը և գիտական նախասիրությունը: Խնդիր դրվեց մինչև ուսումնական տարվա սկիզբ ունենալ դասավանդելիք առարկայի ամբողջական փաթեթը՝ պորտֆոլիոն: Շեշտվեց նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է դասավանդման նոր մեթոդների ներմուծումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման գործընթացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, դաս. Ա. Սիմոնյանը:

Ելույթ ունեցողները հայտնեցին, որ անհատական բեռնվածությունը կազմվել է մանրամասն ու հանգամանալից քննարկումներից հետո:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Մասնագիտական ամբիոնների 2018-2019թթ. անհատական ծանրաբեռնվածությունների հարցը ընդունել ի գիտություն: Ըստ այդմ՝ դասախոսներին հանձնարարել նոր ուսումնական տարվա համար կազմել անհատական զարգացման և աշխատանքային պլանները, մինչև օգոստոսի վերջ նախապատրաստել և ամբիոն ներկայացնել դասընթացների փաթեթները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ավագյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Աղաբաբյան

Հավելված 1

ՀԳ ֆակուլտետի դեկան բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանի հաշվետվությունը (2017-2018 ուստարի)

Հումանիտար գիտությունների ֆակուլտետը ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից մեկն է: Ֆակուլտետում բակալավրիական կրթություն է իրականացվում հետևյալ կրթական ծրագրերով.

-Պատմություն

-Հայոց լեզու և գրականություն

-Հոգեբանություն

-Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

-Մանկավարժություն և հոգեբանություն

-Ֆրանսերեն լեզու և գրականություն

-Անգլերեն լեզու և գրականություն

Ֆակուլտետի կառուցվածքում ներառված է հինգ ամբիոն, որոնք սպասարկում են մասնաճյուղի բոլոր ֆակուլտետները.

- *Հայոց պատմության և հասարակագիտության*
- *Հայոց լեզվի և գրականության*
- *Մանկավարժության և հոգեբանության*
- *Անգլերեն լեզվի և գրականության*
- *Ֆրանսերեն լեզվի և գրականության*

-Ֆակուլտետի կառուցվածքում գործում է նաև ռուսաց լեզվի սեկցիա:

2017-2018 ուստարում ֆակուլտետում սովորել են 313 ուսանող, որից 76 պետպատվերով, 237-ը՝ վճարովի:

Պատմություն մասնագիտությամբ սովորում է 55 ուսանող, ՊՊ՝ 19, վճարովի՝ 36:

Հայոց լեզու և գրականություն՝ 45 ուսանող, ՊՊ՝ 15, վճարովի՝ 30:

Մանկավարժություն և հոգեբանություն, Հոգեբանություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա՝ 105 ուսանող, ՊՊ՝ 13, վճարովի՝ 92:

Ֆրանսերեն լեզու՝ 32 ուսանող, ՊՊ՝ 6, վճարովի՝ 13:

Անգլերեն լեզու՝ 89 ուսանող, ՊՊ՝ 23, վճարովի՝ 66:

Ֆակուլտետը 2017-2018 ուստարում գործունեությունն իրականացրել է ԵՊՀ ԻՄ 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի դրույթներին համապատասխան: Կատարվել է ֆակուլտետի մասնագիտությունների ճշգրտում բակալավրի կրթական ծրագրում, որը բխում է տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկից: Վերափոխվել են առարկայական ծրագրերի ճնշող մասը, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել ֆակուլտետի մասնագիտությունների կրթական մոդուլներում: Փոփոխությունները միտված են չափելի դարձնել մատուցվող գիտելիքը, ուսուցանվող կարողություններն ու փոխանցվող հմտությունները:

Ներկայում ֆակուլտետի կառուցվածքում գործող հինգ ամբիոններում շարունակաբար իրականացվում է առարկայական ծրագրերի վերանայման և կատարելագործման գործընթաց: Դասավանդվող մոդուլների գերակշիռ մասի համար կազմվել են առարկայական փաթեթներ (պորտֆոլիո):

Ֆակուլտետը կարևորում է պրակտիկաների կազմակերպումը և նրանց արդյունավետ անցկացումը: Պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից կատարվում են հետազոտական աշխատանքներ, որոնց նյութերը օգտագործվում են կուրսային և ավարտական աշխատանքներում: Ուսանողները մանկավարժական պրակտիկայի պասիվ ժամանակաշրջանը անցնում են մասնաճյուղում՝ վերստին հարստացնելով տեսական գիտելիքները, իսկ ակտիվ շրջանն անցնում են տարածաշրջանի դպրոցներում:

Ֆակուլտետում կիրառվում է դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման և մշակման, ակադեմիական տեղեկագրի պատրաստման էլեկտրոնային համակարգ: Համակարգի պատասխանատուները դեկանի տեղակալն ու դեկանատի գործավարն են:

Ֆակուլտետում պարբերաբար վերանայվում են ուսանողների գնահատման և ատեստավորման առկա ձևերը:

Ֆակուլտետը պարբերաբար համալրվում է տեխնիկական միջոցներով հագեցած լսարաններով, կաբինետներով, օրեցօր ավելանում է տեխնիկական միջոցների կիրառմամբ դասերը վարող դասախոսների թիվը: Ֆակուլտետի յոթ լսարաններ կահավորվել են ժամանակակից տեխնիկական միջոցներով: Գործում են անգլերենի և ֆրանսերենի կաբինետները, ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնը, որոնք հագեցած

են ժամանակակից տեսաձայնային տեխնիկական միջոցներով: Բացի այդ՝ ֆակուլտետի համակարգչային սրահը հնարավորություն է տալիս ուսանողներին անվճար օգտվել ԵՊՀ գրադարանի էլեկտրոնային պաշարներից և դասերի ավարտից հետո ծառայում է որպես ընթերցասրահ: Ամբիոնները, լեզվի կաբինետներն ու համակարգչային սրահը ապահովված են գերարագ անվճար ինտերնետով:

Կարևոր գործիք է ֆակուլտետում յուրաքանչյուր կիսամյակ իրականացվող սոցիոլոգիական հարցումների մեխանիզմը: Հարցումները իրականացվում են առցանց: Հարցման այս տեսակը կնպաստի ավելի անկաշկանդ պատասխանների և տվյալների հավաքագրմանը:

Ամբիոնային գործունեություն - ամբիոնը ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումն է: 2017-2018 ուստարում շարունակվել է ամբիոնների ծրագրերի կառուցվածքի, դասընթացների բովանդակության, ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշների վերանայման և թարմացման գործընթացը: Նախորդ ուստարում ամբիոններում ստեղծվել էին դասընթացների տարողունակ փաթեթներ՝ պորտֆոլիոների, որոնք պլանավորված և կանխատեսելի են դարձնում ողջ դասընթացը, նպաստում որակի բարձրացմանը: Այս ուստարում ևս ամբիոնները ստեղծել են նոր պորտֆոլիոներ, վերանայել և շտկումներ են կատարել նախորդ առարկայական փաթեթներում: Իմ և ամբիոնների վարիչների կողմից կատարվել են դասալսումներ: Ֆակուլտետի դասախոսների մեծ մասը ունեցել է փոխադարձ դասալսումներ: Կազմակերպվել են բաց դասեր, որոնք, պետք է նշել, այնքան էլ հաճախադեպ չեն եղել:

Ամբիոններում կատարվել են մեծ թվով աշխատանքներ, սակայն ամբիոնային աշխատանքներում դեռևս կան էական բացեր. օրինակ, կանոնավոր գիտաժողովների և գիտական նստաշրջանների կազմակերպման սակավությունը: Դեռևս ամբիոնային աշխատանքների կազմակերպումը այն մակարդակի վրա չէ, որ յուրաքանչյուր տարի հստակ պլանավորվեն և իրականացվեն տարամասշտաբ գիտաժողովներ, սեմինարներ, ֆորումներ և այլն: Ֆակուլտետի հիմնական դասախոսները ընդգրկված չեն պետական կամ ոչ պետական գիտական

ծրագրերում: Գոհացուցիչ չէ ամբիոնների հրատարակած գիտական մենագրությունների թիվը:

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին:

Ամբիոնի դասախոսական կազմում ընդգրկված տասնինը դասախոսներից երկուսը պատմական գիտությունների դոկտոր են, չորսը՝ պատմական գիտությունների թեկնածու, վեցը՝ նաև դոցենտ, երկուսը՝ ասիստենտ, հինգը՝ դասախոս:

Հաշվետու 2017-2018 ուստարում ամբիոնում կատարվել են ինչպես ուսումնական, գիտական, այնպես էլ կազմակերպչական աշխատանքներ:

Տարեսկզբին վերանայվել և սահմանված կարգով հաստատվել են բակալավրիատի եզրափակիչ և միջանկյալ քննությունների հարցաշարերը և ժամանակին տրամադրվել ուսանողներին: Կազմվել և վերանայվել են առարկայական բոլոր ծրագրերը: Կրեդիտային կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով մասնագիտական գրեթե բոլոր դասավանդվող առարկաների համար կազմվել են դասընթացի առարկայական փաթեթներ՝ «Portfolio»-ներ: Ամբիոնի դասախոսները վերջին տարիների ընթացքում դասընթացներ են վարում այսօրվա պահանջներին համապատասխան, կատարում են մեթոդական բնույթի աշխատանքներ, հրատարակում մեթոդական ձեռնարկներ՝ իրենց ներդրումն ունենալով ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների բնագավառներում:

Ամբիոնը սահմանված կարգով հավաքել է կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, դրանք դրել ամբիոնի նիստում քննարկման:

Ընթացիկ, եզրափակիչ քննություններն ընթացել են ժամանակացույցի համաձայն: Այս ուսումնական տարում ամբիոնը դասախոսներին հնարավորություն է տվել ընթացիկ քննությունները անցկացնելու կարգի մեջ կատարելու որոշակի փոփոխություններ, անհրաժեշտության դեպքում՝ հրաժարվել նաև թեստային համակարգից:

Ընթացիկ ուստարում իրականացվել է ավարտական աշխատանքների պաշտպանությունը առկա և հեռակա ուսուցման բաժիններում: Առկա ուսուցման

բաժնում 19 ավարտական աշխատանքների պաշտպանության շնորհիվ 13 ուսանող ստացել է «գերազանց» գնահատական, իսկ 6 ուսանող՝ «լավ» գնահատական: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ պ.գ.թ., դոցենտ Ա. Հ. Հարությունյանը ուսանողների մասնագիտական գիտելիքների և պատկերացումների իմացության, ըմբռնման, ձեռք բերված գիտելիքների ու պատկերացումների կիրառման կարողությունների մակարդակը գնահատել է բարձր, իսկ մասնագիտության շրջանակներում դատողություններ անելու կարողությունների և հաղորդակցման կարողությունների առկայության մակարդակը՝ գնահատել բավարար: Միակ նկատառումը, որ կատարվել է հանձնաժողովի նախագահի կողմից, այն էր, որ ցանկալի կլիներ ավելի ընդլայնել համալսարանի գիտատեղեկատվական համակարգը, որը կնպաստեր ուսումնառության հետագա զարգացմանը:

2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի պատկերը հետևյալն է. ‹‹Պատմություն›› մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմել է 85,7%, II կուրսի առաջադիմությունը՝ 63,6%, III կուրսի առաջադիմությունը՝ 72,2%: Եթե փորձենք պատկերը ներկայացնել նաև որակական առումով, ապա կստացվի հետևյալը. ‹‹Պատմություն›› մասնագիտության I կուրսի կրթական որակը կազմում է 57%, II կուրսինը՝ 18%, III կուրսինը՝ 50%:

Ամբիոնի խնդիրերից է եղել բակալավրի կրթական բլոկում կրեդիտային համակարգի ամբողջական և ուսուցման մեջ նորարարական մոտեցումների ամբողջական ու լիարժեք ներդրումը, որը նաև մասնաճյուղի առաջնահերթ հրամայականներից է: Այս ուղղությամբ ամբիոնը ստեղծել է խթանող մեխանիզմներ, որոնք կնպաստեն ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավմանը. մշակվել են ընթացիկ և եզրափակիչ գրավոր և բանավոր քննությունների գնահատման չափորոշիչները, վերանայվել առարկայական ծրագրերը, անհրաժեշտության դեպքում կատարվել են որոշակի փոփոխություններ:

Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար իրականացվել են դասալսումներ ամբիոնի վարիչի և դեկանի կողմից: Ամբիոնի կողմից նախատեսված երեք պրակտիկաները՝ մանկավարժական, ուսումնական /հնագիտական,

ազգագրական/, արտադրական /թանգարանային, արխիվային/, հաջողությամբ իրականացվել են:

Ընթացիկ ուստարում ամբիոնի աշխատակիցները հրատարակել են նաև գիտական աշխատանքներ: Մի շարք հոդվածներով և զեկուցումներով հանդես են եկել պ.գ.դ., պրոֆ. Ա. Ա. Ներսիսյանը, պ.գ.դ., պրոֆ. Ռ. Ա. Նահապետյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Ֆ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Է. Հովհաննիսյանը, պ.գ.թ., ասիստենտ Ա. Է. Հովհաննիսյանը, դասախոս Ա. Կ. Ազատյանը, իսկ հրատարակված մենագրություններից են պ.գ.թ., դոցենտ Ա. Է. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին Կիլկիյան շրջանում» և պ.գ.թ., ասիստենտ Ա. Է. Հովհաննիսյանի «Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը» աշխատությունները:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին: 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակում կազմվել և հաստատվել է ամբիոնի՝ 2017-2018 ուստարվա ուսումնական պլանը, որտեղ հստակ ցույց է տրվում, թե ամբիոնը ուստարվա ընթացքում կազմակերպչական, ուսումնական, մեթոդական, գիտական ինչ ծրագրեր ունի, ինչ խնդիրներ է դրել իր առջև և դրանց լուծման համար ինչ ժամանակ սահմանել: Ըստ այդմ՝ ուսումնական պլանում սահմանագծված ժամանակացույցի՝ անհրաժեշտաբար վերանայվել են մասնագիտական առարկաների ուսումնական ծրագրերը, որոնք թարմացվել և համապատասխանեցվել են ուսումնական պլանին, դասընթացների փաթեթներում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ: Ամբիոնային քննարկումներից հետո այդ ամենը ներկայացվել է ֆակուլտետի դեկանին: Կազմվել և հաստատվել է նաև ամբիոնի աշխատանքային պլանը:

Վերանայվել են հարցաշարերը՝ թե՛ ընթացիկ ստուգումներին ու քննություններին և թե՛ ամփոփիչ-եզրափակիչ քննություններին վերաբերող, յուրաքանչյուր առարկայից, ըստ սահմանված ժամանակացույցի, հարցաշարերը տրամադրվել են ուսանողներին: Հարցաշարերը վերանայվել են այնպես, որ առաջադրվող հարցերը ստուգեն ոչ միայն ուսանողների տեսական գիտելիքները, այլև նրանց կողմից դրանց գործնական կիրառության արդյունավետությունը:

Գրեթե բոլոր մասնագիտական առարկաների համար փոխվել են դասընթացի գնահատման գործիքներն ու ընթացակարգերը: Հնարավորինս փորձ է կատարվել

հրաժարվել թեստային եղանակով ուսանողների գիտելիքների ստուգման տարբերակից՝ նախընտրությունը տալով գրավոր կամ բանավոր քննություններին: Գնահատման ռազմավարության մեջ կարևոր տեղ է հատկացվել ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքին, դասընթացների ժամանակ նրա դրսևորած ակտիվությանը:

Ամբիոնի կողմից սպասարկվող մասնագիտական առարկաների դասընթացների փաթեթները տրվել են մասնաճյուղի այլ ամբիոններին, կազմվել է ընթացիկ ստուգումների ու քննությունների հանձնաժողովների կազմը:

Յուրաքանչյուր ստուգումից և քննությունից հետո ուսանողների առաջադիմության արդյունքները դարձել են ամբիոնի նիստերի օրակարգի կարևոր հարցերից, քննարկվել են, արվել են անհրաժեշտ հետևություններ: Քննական գործընթացները անցկացվել են պատշաճ մակարդակով: Որոշվել է ջանք չխնայել՝ վերացնելու նկատված թերությունները:

Քննարկվել և հաստատվել են նաև 2017-2018 ուստարվա երկու կիսամյակների լրացուցիչ պարապմունքների, փոխադարձ և ամբիոնի վարիչի կողմից իրականացվող դասալսումների ժամանակացույցները, որոնց հիմունքով էլ ուստարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել են փոխադարձ և ամբիոնի վարիչի կողմից իրականացվող դասալսումներն ու լրացուցիչ պարապմունքները:

Արդեն որպես ձևավորված ավանդույթ մասնաճյուղի բոլոր ֆակուլտետների 1-ին և «Հայոց լեզու և գրականություն» բաժնի բոլոր կուրսերում տարեսկզբին իրականացվել են թելադրություններ՝ ուսանողների գրագիտության մակարդակը ստուգելու համար: Հիմք ընդունելով դասախոսների ներկայացրած ոչ գոհացուցիչ արդյունքները և, ըստ այդմ, նպատակադրվելով բարձրացնելու ուսանողների գրագիտությունը և վերացնելու անբավարար արդյունքները՝ որոշվել է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Ամբողջացվել և ուսանողներին են տրվել կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, նշանակվել են ղեկավարներ: Կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքն արդյունավետ և կանոնավոր դարձնելու նպատակով կազմվել է խորհրդատվության օրերի ժամանակացույց:

Ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը պատշաճ մակարդակով անցկացնելու նպատակով ապրիլին և մայիսին կազմակերպվել են նախապաշտպանություններ:

Առկա բաժնում 2017-2018 ուստարվա ավարտական կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը տեղի է ունեցել մայիսի 21-ին: Այդ գործընթացը հատկանշվել է ուսանողների պատրաստվածության բարձր մակարդակով, ընդգծված պատասխանատվությամբ: Քննական հանձնաժողովի նախագահ բ.գ.դ. Վ. Դևրիկյանն իր գոհունակությունն է հայտնել քննական գործընթացի արդյունքների վերաբերյալ՝ մասնավորապես ընդգծելով այն հանգամանքը, որ հարուստ էին շրջանավարտների մասնագիտական գիտելիքները, բարձր էր դրանց կիրառման կարողությունների մակարդակը: Գոհացուցիչ էին նաև աշխատանքների ներկայացման որակը և մասնագիտական գրագետ բանավոր խոսքը: Հանձնաժողովի նախագահը խորհուրդ է տվել հետագայում խուսափել ծավալուն և տարողունակ թեմաներից և ավելի մեծ ուշադրություն դարձնել հրականության արդիական խնդիրներին:

Զեկուցողը ներկայացրեց նաև շրջանավարտների ստացած գնահատականները. առկա ուսուցման համակարգում ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 6 շրջանավարտներից 4-ը ստացել է «գերազանց», 2-ը՝ «լավ»: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Հեռակա ուսուցման բաժնի միայն մեկ ուսանող է այս տարի հանձնել ամփոփիչ քննություն և ստացել է «բավարար» գնահատական: Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 16 շրջանավարտներից 2-ը ստացել է «գերազանց», 10-ը՝ «լավ», 4-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Ներկայացվեց նաև առկա բաժնում սովորող ուսանողների՝ 2017-18 ուստարվա առաջադիմության ամփոփ պատկերը՝ ըստ կուրսերի.

1-ին կուրս

1-ին և 2-րդ կիսամյակներում՝ 100%

2-րդ կուրս

1-ին կիսամյակ՝ 71,43 %

2-րդ կիսամյակ՝ 100 %

3-րդ կուրս

1-ին կիսամյակ՝ 93,33 %

2-րդ կիսամյակ՝ 100 %

4-րդ կուրս

1-ին և 2-րդ կիսամյակներում՝ 100%:

Ինչպես տեսնում ենք, բոլոր կուրսերն էլ ուստարվա 2-րդ կիսամյակում ցուցաբերել են 100 % առաջադիմություն, իսկ 1-ին և 4-րդ կուրսերն այդ բարձր ցուցանիշը դրսևորել են նաև 1-ին կիսամյակում:

Կազմվել է 2018-2022 ուստարիների բակալավրիատի ուսումնական պլանը: Քանի որ 2018-2022 ուստարիներին, ըստ նոր ուսումնական պլանի, 8-րդ կիսամյակում դասեր նախատեսված չեն, ըստ անհրաժեշտության՝ կատարվել է առարկաների վերաբաշխում, փոփոխվել է որոշ առարկաներին տրված կրեդիտների քանակը:

2018-2022 թթ. ուսումնական պլանին համապատասխան՝ կազմվել է մասնագիր, որին իրենց ակտիվ մասնակցությունն են բերել ամբիոնի բոլոր դասախոսները, մասնավորապես այդ գործում մեծ է «Հայոց լեզու և հայ գրականություն» մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատու Ա. Սարհատյանի և դասախոս Լուսինե Թումանյանի դերը:

Ամբիոնը մանկավարժական գործունեությանը զուգահեռ բնականաբար զբաղվում է նաև գիտական գործունեությամբ: Տարվա ընթացքում ամբիոնի դասախոսների հեղինակությամբ տպագրվել են և՛ գիտական, և՛ մեթոդական բովանդակությամբ հոդվածներ, աշխատություններ:

Ամբիոնի աշխատակիցների ընդհանուր թիվը 11-ն է: Տարվա ընթացքում հրատարակվել է 17 հոդված: Դրանցից 6-ը հրատարակվել են մասնաճյուղի «Ակունք» հանդեսում: Մնացած 11-ից 9-ը տպագրվել են տարբեր գիտական ամսագրերում, որոնք բոլորն էլ հաստատված են ԲՈՀ-ի կողմից: Դրանցից մեկը տպագրվել է Բեյրութում (Վ. Ավագյան), ևս մեկը հրատարակվել է միջազգային վարկանիշավորման համակարգերում ներառված գիտական ամսագրում (Լ. Թումանյան):

Տպագրվել է ամբիոնի երիտասարդ դասախոս Ս. Հովհաննիսյանի մենագրությունը՝ «Տեքստը էլեկտրոնային հաղորդակցման մեջ» վերնագրով:

Վ. Ավագյանը համահեղինակ է 4 ուսումնամեթոդական ձեռնարկների («Հայոց լեզու և հայ գրականություն. 2018թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան», մաս 1, 2, 3, 4):

Ամբիոնի որոշ դասախոսներ (Վ. Ավագյան, Վ. Աղաբաբյան, Ա. Սարհատյան, Հ. Վանյան) գիտական զեկուցումներով հանդես են եկել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի կողմից կազմակերպված գիտաժողովին՝ «Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության ձևավորման գործընթացները» թեմայով, որը կայացել է մայիսի 12-ին:

Ուրախալի է այն փաստը, որ ՀԼԳ բաժնի 2-րդ կուրսի ուսանողներ Աստղիկ Ղազարյանն ու Ռոզա Մելքումյանը (ղեկավար՝ Վ. Ավագյան) մասնակցել են ապրիլի 19-ին ԵՊՀ-ում կազմակերպված ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային 5-րդ գիտական նստաշրջանին՝ հանդես գալով զեկուցումներով, որոնք արժանացել են բարձր գնահատականի և երաշխավորվել տպագրման:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին: Ամբիոնն ունի 18 աշխատակից. մեկը մանկավարժական գիտությունների դոկտոր է, ութը՝ գիտությունների թեկնածու, չորսը՝ նաև դոցենտ, երեքը՝ ասիստենտ, ութը՝ դասախոս, որոնցից մեկը՝ ասիստենտ, և մեկ գործավար-օպերատոր:

Հաշվետու 2017-2018 ուստարում ամբիոնում ներկայացվել են առարկայական փաթեթներ /պորտֆոլիոներ/, որոնց մեջ տեղայնացվել են ժամանակակից գիտական տեսությունները և հայեցակարգերը:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է պատշաճ մակարդակով, քննական կարգի խախտման որևէ դեպք չի արձանագրվել: Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած 10 շրջանավարտներից 5 ուսանող ստացել է «գերազանց», 5-ը՝ լավ: Անբավարար գնահատական չի գրանցվել:

Նույն մասնագիտության հեռակա ուսուցման բաժնի այս տարվա ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 26 շրջանավարտներից 12-ը ստացել է

«լավ», 14-ը՝ «բավարար» գնահատական: «Գերազանց» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո քննական հանձնաժողովի նախագահ, մ.գ.դ., պրոֆեսոր Հ. Պետրոսյանը ներկայացրել է իր առաջարկությունները՝ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ, և հայտնել իր գոհունակությունը տարվող աշխատանքներից: Նա առաջարկել է հետագայում ավելի մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքի հետազոտության մեթոդների ընտրությանը և դրանց համապատասխանությանը հետազոտվող առարկային:

Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար իրականացվել են դասալսումներ ամբիոնի վարիչի և դեկանի կողմից: Ամբիոնի կողմից նախատեսված մանկավարժական և արտադրական պրակտիկաները իրականացվել են հաջողությամբ:

2017-2018 ուստարվա ընթացքում ամբիոնի դասախոսները հանդես են եկել գիտական զեկուցումներով, կազմակերպվել են տեսագործնական դասեր, միջոցառումներ, որից հետո կատարվել են քննարկումներ, դասախոսների միջև տեղի է ունեցել փորձի փոխանակում:

2017-2018 ուստարում ամբիոնի դասախոսները հրատարակել են հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ, ստացել են գիտական աստիճաններ և կոչումներ: Ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Վ. Բրուտյանը 08.06.18 թ. ստացել է մանկավարժական գիտությունների դոկտորի կոչում:

Ամբիոնը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, կատարվել են ուսումնաճանաչողական այցեր, դասախոսները հանդես են եկել գիտական զեկուցումներով.

1. Բաց դասի կազմակերպում՝ նվիրված Հոգեկան առողջության միջազգային օրվան (դասը վարել է հոգ. գիտ. թեկն., ասիստենտ Դ. Սարգսյանը):

2. Ճանաչողական այց ԵՊՀ՝ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ/ լաբորատորիա և Փորձարարական հոգեբանության լաբորատորիա, ինչպես նաև Սթրեսի և ցավի կառավարման կենտրոն:

3. Տարիքային հոգեբանության դասընթացի շրջանակում «Հոգեբանություն» մասնագիտության 3-րդ կուրսի հետ այց Իջևանի համար 1 մանկապարտեզ՝ նախադպրոցականների տարիքային առանձնահատկությունները և նրանց ուսուցման ու կրթության մեթոդները ուսումնասիրելու նպատակով (դասախոս՝ Վ. Մելիքսեթյան):

4. Տարիքային հոգեբանության դասընթացի շրջանակում այցի կազմակերպում Իջևանի պոլիկլինիկա՝ մարդու պրեննատալ հոգեբանության ուսումնասիրման նպատակով (դասախոս՝ Վ. Մելիքսեթյան):

5. 2018թ. մայիսի 21-ին «Արտակարգ իրավիճակների հոգեբանություն» դասընթացի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի «Հոգեբանություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հոգ. գիտ. թեկնածու Դիանա Սարգսյանի ուղեկցությամբ ճանաչողական այց են կատարել ԱԻՆ Տավուշի մարզային փրկարարական վարչություն:

Հաշվետու ուստարում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել են 7 հոդված, 1 ուսումնական ձեռնարկ, 1 մենագրություն: Ամբիոնի դասախոսները մասնակցել են 1 դրամաշնորհային ծրագրի և 11գիտաժողովի:

Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին: Ամբիոնն ունի տասնյոթ աշխատակից. մեկ պրոֆեսոր, մեկ դոկտոր, երկու դոցենտ, բանասիրական գիտությունների երկու թեկնածու, ժամավճարային սկզբունքով վարձատրվող երեք դասախոս, մեկ օպերատոր-գործավար:

2017-2018 ուստարվա սկզբին վերանայվել և հաստատվել են առարկայական ծրագրերը՝ առկա և հեռակա ուսուցման համակարգում դասավանդվող առարկաների համար: Համապատասխան ժամկետում կազմվել են եզրափակիչ և միջանկյալ քննությունների հարցաշարերը և տրվել ուսանողներին:

Մինչև ուսումնական տարվա սկիզբը կազմվել և հաստատվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: Ավարտական կուրսի ուսանողների հետ կազմակերպվել են հանդիպումներ ավարտական աշխատանքների պաշտպանության նոր կարգի քննարկման և պարզաբանման նպատակով: Սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ուսանողները հանդիպել են

իրենց ղեկավարներին, իրականացվել է ավարտական աշխատանքների երկու նախապաշտպանություն:

Ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, որը նշեց նաև քննական հանձնաժողովի նախագահ, բ.գ.թ., դոցենտ Լիլիթ Բաղալյանը, որը իր գոհունակությունը հայտնեց ավարտական աշխատանքների թեմաների արդիականության վերաբերյալ: «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության չորս ուսանողների կողմից ավարտական աշխատանքների պաշտպանությունն արժանացավ գերազանց, իսկ տասներեք ուսանողներինը՝ լավ գնահատականի: Բավարար գանահատական չի եղել:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը լայնորեն կիրառում է ժամանակակից տեխնոլոգիաները դասապրոցեսում, այդ թվում՝ համակարգչային լսարան, համացանց, ինտերակտիվ մեթոդներ: Ուսանողների ինքնուրույն աշխատանքները ներառում են PPT–ների պատրաստում և ներկայացում համապատասխան թեմաների վերաբերյալ, ինչպես նաև զեկուցումներ և ռեֆերատներ:

Հաշվետու տարում լույս է տեսել ամբիոնի դասախոսների կողմից հեղինակած տասնմեկ գիտական հոդված, ամբիոնի նախկին դասախոս Ս. Աբրահամյանի կողմից լույս է տեսել «Անգլերենը արվեստի բաժնի ուսանողների համար» ուսումնական ձեռնարկը: Ամբիոնի դասախոսներից բ.գ.թ., դոցենտ Գ.Մուրադյանը պաշտպանել է դոկտորական, իսկ Մ. Խաժակյանը՝ թեկնածուական ատենախոսություն: Ամբիոնի դասախոսների կողմից ուսումնասիրություններ են կատարվել մասնավորապես երկրագիտության, համեմատական լեզվաբանության, գործաբանական լեզվաբանության, բառագիտության, թարգմանաբանության և քերականության ոլորտներում:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են ԵՊՀ հետբուհական կրթության վարչության կողմից իրականացվող դասընթացներին և հավաքել կրեդիտներ: Ամբիոնի դասախոսները մասնակցել են նաև Հայաստանում Բրիտանական Խորհրդի կողմից կազմակերպված դասընթացներին և ստացել համապատասխան վկայականներ:

Ամբիոնի դասախոսները իրենց մասնակցությունն են ունեցել 2017 թվականի ապրիլին ԵՊՀ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ԼՄՀ ամբիոնի կողմից կազմակերպված «Մշակույթը լեզվի պրիզմով» գիտաժողովին, ԵՊՀ ԻՄ-ում կայացած «1918 թ. Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության արարման գործընթացը» խորագրով հանրապետական գիտաժողովին՝ նվիրված Առաջին հանրապետության հիմնադրման հարյուրամյակին, Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված երկու աշխատաժողովին՝ «Կրթակարգի մշակում այլ առարկաների բովանդակության և լեզվի միջոցով» և «Բազմալեզու և բազմամշակույթ ուսուցում շարժունակության միջոցով» թեմաներով, «Մանմար» հրատարակչության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև ՀԱԼԴԱ (AELTA)-ի կողմից կազմակերպված XIV տարեկան գիտաժողովին:

2017–2018 ուստարում ամբիոնի կողմից կազմակերպվել են հատուկ դասեր, որոնք վարել են ԵՊՀ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետից հրավիրված դասախոսներ, այդ թվում ԼՄՀ ամբիոնի վարիչ բ.գ.դ., պրոֆ. Շ. Պարոնյանը: Հրավիրված դասախոսները գոհունակությամբ նշեցին «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների հետաքրքրվածությունը ներկայացված դասընթացների նկատմամբ:

«Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի վարիչը մարտի 23-ին իրականացրեց «Գույներն ու գունանվանումները լեզվամշակույթում» թեմայով գիտագործնական սեմինար:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ակտիվորեն մասնակցել են ամբիոնի կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումներին, այդ թվում ՝ «Եվրոպական լեզուների օր», «Ամանորյա միջոցառում», «Գեղեցկության և մայրության տոն», «Օսկարակիր ֆիլմեր», «Այն հերոսը, որով ես հիանում եմ», «Բայրոնի պոեզիան», «Բոլոր Սրբերի տոնը», «Հայաստանի տեսարժան վայրերը», «Բուսական և կենդանական աշխարհ» թեմայով բաց դաս «Կանաչ սիմֆոնիա» այգում և այլն: Բոլոր միջոցառումների աշխատանքային լեզուն անգլերենն էր:

Ամբիոնի ծրագրի պատասխանատուն կազմակերպել է «Գրքասեր» ակումբը, որի հանդիպումների ընթացքում քննարկվել են անգլալեզու գրողների հետաքրքիր աշխատանքներ:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բաժնի ուսանողները մասնակցել են “Write On! Competition 2018” էսսեների միջազգային մրցույթին, որը կազմակերպել էր ԱՄՆ խաղաղության կորպուսը, և մի քանի ուսանողներ զբաղեցրել են առաջին տեղեր:

Հարկ է նշել նաև, որ ամբիոնը, համագործակցելով ԱՄՆ խաղաղության կորպուսի հետ, ապահովում է բանավոր խոսքի դասընթացներ, որոնք իրականացնում են անգլերեն լեզվի բնիկ կրողները:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին: Ամբիոնում աշխատում են 10 դասախոսներ: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկան մշտապես կատարելագործման և արդիականացման կարիք ունի, հետևաբար նոր փոփոխություններ են անհրաժեշտ ֆրանսերենի դասավանդման գործում, որը պետք է միտված լինի որակավորումների ազգային շրջանակին և, միջազգային առարկայական հենանիշներին համապատասխան վերամշակված, բակալավրի կրթական ծրագրի բարելավմանը: Այդ առումով ամբիոնը հիմնականում իրականացրել է իր առաջ դրված խնդիրները:

2017–2018 ուստարվա սկզբին վերանայվել և հաստատվել են առարկայական ծրագրերը առկա և հեռակա ուսուցման համակարգում դասավանդվող առարկաների համար: Ավարտական կուրսի ուսանողների հետ կազմակերպվել են ակնարկային դասընթացներ, որոնք իրականացվել են բարեխղճորեն:

Սեպտեմբերին քննարկվել և հաստատվել են ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները, ղեկավարները, խորհրդատվության օրերը և ժամերը:

Ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է բարձր մակարդակով, որը նշեց նաև քննական հանձնաժողովի նախագահ, բ.գ.թ., դոցենտ Մելանյա Ղազարյանը, որը իր գոհունակությունը հայտնեց ավարտական աշխատանքների թեմաների, ուսանողների կողմից կատարած գիտական վերլուծությունների վերաբերյալ: Նա նշեց, որ ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքներով 4 ուսանող ստացել է «գերազանց», 10-ը՝ «լավ»:

Հաշվետու տարում ամբիոնի դասախոսների կողմից լույս են տեսել 4 գիտական հոդվածներ, թարգմանություններ, որն անշուշտ բավարար չէ:

2018 թ. հոկտեմբերին Երևանում կայանալիք ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին ընդառաջ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում ամբիոնը հեղինակել է բազմաթիվ աշխատանքներ: Հայաստանի արտգործնախարարի՝ ֆրանկոֆոնիայի գծով խորհրդական պարոն Վահագն Աթաբեկյանը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հանդիպել է ուսանողների և դասախոսների հետ և քննարկել գագաթնաժողովին նրանց՝ որպես կամավորներ աշխատելու հարցերը:

Դեռևս հոկտեմբեր ամսից սկսել են նախապատրաստական աշխատանքներ՝ ուսանողների փոխանակման ծրագիր իրականացնելու համար: Պարոն Վ. Աթաբեկյանի և Ֆրանսիայի Վալանս քաղաքի հայկական համայնքի աջակցության շնորհիվ՝ ուսանողների փոխանակության ծրագրով ամբիոնի 2 դասախոսներ և 4 ուսանողներ պրակտիկա են անցկացրել Ֆրանսիայի Հանրապետության Վալանս քաղաքի «Մաեստրիս» դպրոցում: Այցը կարևոր դեր խաղաց համալսարանական կյանքում և արժանացավ Մաեստրիսի ղեկավարության և հայկական համայնքի բարձր գնահատականին:

Այժմ արդեն կատարվում են նախապատրաստական աշխատանքներ ֆրանսիացի ուսանողների և դասախոսների՝ 2018 թ. հոկտեմբերին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հյուրընկալելու համար:

Շարունակվել է համագործակցությունը «Ֆրանս-հայկական ասոցացիայի» հետ: 4-րդ կուրսի 9 ուսանողներ տարբեր չափի կրթաթոշակներ են ստացել:

Ամբիոնի դասախոս Սվետա Օհանյանի կողմից կազմակերպվել են միջոցառումներ: Նոյեմբեր ամսին կազմակերպվել է «Ֆրանսիայի հայազգի մեծերը» թեմայով միջոցառումը, իսկ մարտ ամսին՝ «Ֆրանսերենը սիրո լեզու»:

Ապրիլ ամսին ամբիոնի դասախոսներ Մ. Աղբալյանը և Թ. Ամիրաղյանը մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել «Ֆրանսերենը միջմշակութային շրջանակներում» թեմայով միջազգային գիտաժողովին:

Ֆրանկոֆոնիայի առաջիկա գագաթնաժողովի շրջանակներում ֆրանսիական բաժնի 3-րդ և 4-րդ կուրսեցիները մասնակցեցին ԵՊՀ-ում կազմակերպված

«Ամենախելացի ֆրանկոֆոնը» թեմայով ինտելեկտուալ խաղին և վերադարձան մրցանակներով:

2018 թ. հունիսի 28-ին Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ժ. Լաքոտի հրավերով Ֆրանսերեն լեզու և գրականություն ամբիոնի դասախոսները մասնակցեցին Երևանում Ֆրանսիայի դեսպանատանը կազմակերպված ֆրանսերենի մասնագետների ժողովին, որտեղ քննարկվեց ֆրանսերենի դասավանդմանը դեսպանատան աջակցման խնդիրը:

Դեկան՝ բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյան